

115 ւորչէ՛ այտի էառ սկիզբն, և նստան երկոտասան կա-
 թուղիկոսք մինչև ցՅովսէփ ի Վաղարշապատ և անտի
 փոխեցան ի Բլին, և նստան անդ կաթուղիկոսք ԻԳ,
 և փոխեցան յԱրամուս և անդ նստան կաթուղիկոսք
 ԻԱԳ), և փոխեցան յԱնի, և նստան անդ կաթուղիկոսք
 Գ, և եկեալ Պետրոս, կաթուղիկոսն նստաւ ի Սերաս-
 120 տիա ի թուին Հայոց ԳՃՂԵ Եւ քուերորդին Խաչիկն
 նստաւ ի Կսկիսոն առ Գագկայ Հայոց թագաւորին: Եւ
 Վկայասէրն ի Մամնդաւ, բայց շրջադուծեալն, և Բար-
 սեղ կաթուղիկոսն կրկին յԱնի, և եկեալ յԱղթամար առ
 Իշխանն Հայոց Վասիլ և վախճանեցաւ: Իսկ ի թուակա-
 125 նիս Հայոց ԵՃԿԲ, ձեռնադրեցաւ Գրիգորիս յաթոս
 Հայրապետութեան և եկեալ ի Հոսովկայն ի վեց հա-
 րիւր թուականիս Հայոց, և նստան ի Հոսովկայն կա-
 թուղիկոսք տասն, ի ժամանակ: հարիւր քառասուն և
 մէկ ամի, մինչև ի թիւն Հայոց ՉԽԱ, յոր եկեալ Մարայ
 150 սուլթանն Աշրաֆն կոչեցեալ և առեալ զՀոսովկայն քան-
 զեաց և աւերեաց, և եկեալ Աջն ի Կիլիկիա, որ այժմ
 ասի Սիս առ թագաւորն Հայոց երկրորդ Հեթումն:
 Եւ շինեցան կաթուղիկէ տաճարքն Էջմիածին և սուրբ
 Սովի և սուրբ Աստուածածին անուանեալք ի խորհուրդ-
 155 այդ եկեղեցեացդ, և ձեռնադրեցին վարդապետք և
 եպիսկոպոսք զԳրիգոր Անաւարդեցին կաթուղիկոս, յո-
 րոց մին էր Գէորդ Լամբրոսնացին: Եւ յայնմհետէ մինչև

առաջին 114—5, ւորչէն անտի սկիզբն էառ: նստան ԲԺ, կաթու-
 ղիկոսուք: 115, չիք անտի: 117, չիք անդ: 119, Եւ եկեալ: 121,
 հրամանաւ Գագկայ: 122, Մամնդաւ: Եւ Բարսեղ, 123, յԱղթամար, և
 առ: 124 չիք և: վախճանեցաւ ի թուակա: 125, Ձեռնադրեաց զԳրի-
 գորիս: 126—7, ի ՉՃ թուակ:

ԹՊ. 37^ր: 128—9, Ժ, որ էանց ժամանակ ՃԽԱ: 129, ամ, մինչև ՉԽԱ
 թուականին Հայոց, դոր 131, քանդեաց, աւերեաց և աւարեաց, և
 ապա եկեալ Աջ սրբոյ Լուսաւորչին ի Կիլիկիայ: 133—4: և շինեցաւ: Էջ-
 միածնի և սրբոյն Սովիայ և սուրբ Աստուածածնի անուանեալն: 135,
 այդը եղեալ եկեղեցեաց: 136, Անաւարդացին: 136—7, որոց մինն:

ցայսօր կայ հայրապետութիւնն հաստատ աստ և սուրբ
 Լուսաւորչի Աջն աստ, զի «ի սմա բնակեցաւ, զի հաճեցաւ
 440 ընդ սա» (Սաղմ. ՃԼԲ. 13—14): Եւ եղև սա գլուխ,
 որ է, անհատն՝ սեռ. և առաջինն վերջին, ըստ Աւետա-
 րանին (Մատթ. ԺԹ. 30) և ըստ Սաղմոսին կցօրգին (ՃՄ.
 կցօրդ, «Փոքր էի»), որ է մասն հանուր:

Եւ յետ ճիժ տարւոյն, որ է թուին Հայոց ԶՃՂ, 5)
 445 անհնազանդ եղեալ ձեր արևելեան կողմից ի սուրբ Լուսա-
 ւորչի Աթոռոյս և ձեռնադրեցին ըստ կամաց իւրեանց զԿի-
 րակոս կաթուղիկոս Խորվիրապեցին զապարայով, որ-
 պէս որ յայտն է ի շարադրութիւնս Գրիգորի Կեսարա-
 ցւոյն 6). Ահա այս քեզ պատասխանի: Ահա և ևս ի ձե-
 450 սադրին իւրում՝ վկայէ հոգելի հայրն, երիցս երանեալ
 րարունապետն և անյաղթ փիլիսոփայն և պայծառ
 ջահն եկեղեցւոյ այսպէս.

«Ես անարժան Գրիգորս, պիտակ անուամբ կոչե-
 պեալ վարդապետ և սրտրիարդ, յորժամ ի Կոստանդ-
 455 ճուպօլտոյ եկի ի Կեսարիա և հարկ եղև ինձ գնալ
 «ի Բերիայ, այսինքն Հալէպ, վասն Երուսաղէմայ նուի-
 «րակութեան, զոր յառաջագոյն կամօք և միաբանու-
 «թեամբ Տէր Ազարիա կաթուղիկոսին և վարդապե-
 «տին Հայոց Տէր Ղուկասու և Տէր Սրապիսնի և Տէր
 460 «Դաւիթ եպիսկոպոսին, որ յանձնարարին զժառայու-
 «թիւն նուիրակութեան սուրբ Երուսաղէմայ, զոր կա-
 «տարեցի իսկ գնոյն մատակարարութիւնն, և ի գնալն
 «կամեցայ անցանել ընդ երկիրն Կիլիկեցւոց վասն այս-

138. կայ հաստատ հայրապետութիւն: 139. աջն ի սմա բնակեց: 141.
 որ անհատն սեռ: 144. թիւն Հայոց ՊԹ: 145. արևելեանցդ սուրբ
 Լուս: 146. Աթոռոյն: 147. կաթուղիկոսն: զապարայով: 148. յայտ է:
 149. Եւ ի ձեռագր:

Թդ. 38^m: 150. հոգելից հայրն մեր: 152. չիք այսպէս: 153.
 Սոյնպէս էս: 154. յորժամ ելի: 155. և եկի: 156. չիք ի Բերիայ
 այսինքն: 156—7. վասն նուիրակութեան սրբոյն Սաղմոյս: 159. վար-
 դապետք Հայոց Տէր Ղուկաս և Տէր Սրապիսն: 160. եպիսկոպոսայն,
 որ յԵրուսաղէմ, յանձն առի: 161. սրբոյ: զոր և: 163. ընդ երկրու:

- «քան պատճառանայ, նախ՝ երկրպագութիւն սուրբ
 463 «Լուսաւորչի Աշոյն, երկրորդ՝ ի տեսութիւն Յովհաննէս
 «կաթուղիկոսի տանս Կիլիկիոյ, վասն համոզելոյ զսա
 «ի խաղաղութիւն. զի Տէր Յովհաննէս վարդապետն
 «ի Սիւն է ձեռնադրեալ կաթուղիկոս և Պետրոս վար-
 «դապետն ի Հոլէպ, և այսպէս երկրպագութիւն ան-
 170 «կեալ էր ի մէջ ինքեանց 7): Ի թուականիս Հայոց ՌԾԱ,
 «մայիս ԻԹ եկեալ հասի ի Կիլիկեցոց դաւառս, ի դը-
 «պեակն, որ կոչի Վահկայ, զի անդ էր ամարայնոց կա-
 «թուղիկոսարանի, և ի տեսանել զմիմեանս ոչ սակաւ
 «սուրբաբութիւն եղև մեզ և այլ բրիտանէից, և եղև
 475 «մնալ մեզ անդ ԼԱ օր, մայիսի ԻԹ օրէն, մինչև ի յու-
 «նիսի ԻԳ օրն, և ժողովեցան առ անարժանութիւնս
 «իշխանազունք և ամենայն զլիսաւորքն ժողովրդեան
 «տանս Կիլիկեցոց և աղաչէին՝ վասն Աստուծոյ ուղիղ
 «գատաստան արա տեղով, ըստ կանոնաց և ըստ հայ-
 180 «րենի հրամանաց և աւանդութեանց տանս Հայոց: Եւ
 «ետու ձեռագիր վկայական ի ձեռս նոցա այսպէս. զի
 «ըստ առաքելական վիճակի գիտեմք վիճակեալք զտունս
 «Հայոց առաքելոյն Թադէոսի, զի ինքն սուրբ առա-
 «քեալն Թադէոս ձեռնադրեաց զմէ յաշակերտացն իւ-
 485 «րոց, Թէովիլոս անուն, զոր Ղուկաս յիշէ զսա ի սկիզբն
 «Աւետարանին (Ղուկ. Ա. 3) և ի սրակս առաքելոց
 (Գործք Առաք. Ա. 1):

«Չսա կարգեալ սուրբ առաքեալն Թադէոս առաջ-

164. պատճառացու յերկրպագութիւն սրբոյ: 165. Տեսան Յօհան-
 նիսի: 166 նորընծայ կաթուղ: և վասն: զսոսա: 167. Յօհաննէս
 կաթուղիկոսն: 168. ի Սիւն է: 170. չիք էր: 171. և մայիսի ԻԹ: ի դա-
 ւառն Կիլիկիոյ: 172. որ կոչիւր:

ԹՊ. 38^թ: 174. եղև մեզ և ամենայն բրիտա: 175. ինձ մնալ: ի մա-
 յիսի ԻԹ. — էն մինչև: 175 — 6. ի ԻԳ. յունիսի: 178. Կիլիկիոյ և աղաչեցին
 թէ վասն: 179: արա մեզ ըստ մերոց հայրենի: 180. չիք հրամանաց և չիք
 տանս Հայոց: 181. ի ձեռս սոցա: 182. վիճակեալ: 183. Թադէոսի, և
 աթոս առաջին գլխօտրիա. զի ինքն առաքեալն: 185. չիք զսա յսկիզբն:
 186. առաքելոցն: 188. զսա կարգեաց:

«նորդ Հայաստանեայցս. յաղագս այսմ պատճառի
 190 «սուրբ Գրիգոր Լուսավորիչն Հայոց ի Կեսարիա ընկա-
 «լաւ զձեռնադրութիւն. և այսպէս ամենայն կաթու-
 «ղիկոսք լինէին մինչև ի չար ժողովն Քաղկեդոնի(Ց), զոր
 «յոյնք կամեցան և արարին: Յայնժամ բաժանեցան
 «հայքն ի յունաց և այլ ոչ ևս ընկալան զձեռնադրու-
 195 «թիւնն ի Կեսարիա, և եղև ինքնադրուիս կաթուղիկո-
 «սութիւնն Հայոց. և վասն առաւել շիտթմանց և խռո-
 «վութեանց երբեմն ի թաթարաց և ի պարսից և եր-
 «բեմն ի յունաց, վասն որոյ և այլ և այլ տեղիս նստէին
 «կաթուղիկոսք Հայոց, երբեմն ի Վաղարշապատ, եր-
 200 «բեմն ի յԱղթամար, երբեմն ի Ծովք, ի Քեսուն, ի Հը-
 «ռոմկայն և յայլ բազում տեղիս, որ ոչ երկարեմ:
 «Բայց ի վերջին ժամանակս ի ձեռն թաղաւորացն կի-
 «լիկեցւոց հաստատեցաւ կաթուղիկոսութիւնն ի Սիս
 «կաթօք և միաբանութեամբ ամենայն Հայոց, և ոչ թէ
 205 «միով ումեք կամ երկօրումք, որ ԳՃԺԱ ամք են, բաց
 «ի հռոմկայէն՝ որ տունն կիլիկեցւոց հաստատութեամբ
 «ունի զաթոռ կաթուղիկոսութեան մինչև ցայժմ, և է
 «այժմ՝ նորընծայ կաթուղիկոս Տէր Յովհաննէս, որպէս
 «և մեք ձեռնադրեցաք և տուաք զվկայական թուղթս
 210 «ի ձեռն նորա, որ և հնազանդքն այսմ աթոռոյս օր-
 «հնեսցին յԱստուծոյ և ամենայն սրբոց նորա և ի մէնջ.
 «ամէն: Իսկ անհնազանդքն և հակառակողքն և թըշ-

190 սուրբն: 191. զձեռնադրութիւնն: 192. կաթուղիկոսք Հայոց
 ի Կեսարիա ձեռնադրեալ լինէին մինչև: 194. հայք: 196. Հայոց: Բայց
 առ ի ոչ ունկիոյ զհաստատութիւն ազգս Հայոց վասն առաւել շիտ:
 ԹՊ. 39^ա: 197. այսինքն երբեմն: 198. որոյ և յայլ և: 200. յԱնի:
 երբեմն յԱղթամար: ի Ծովքն Քերտմն: 201. զոր ոչ երկարեմք: 202—3.
 կիլիկիոյ: 205. միով կամ երկօրումք. զոր ձՃԱ: 206. զորս կիլիկիոյ:
 207. մինչև ցայսօր: 208. Յօհաննէսն: 209. և մեք բերաք զհաւա-
 նութեան ձեռագիր ամենայն եպիսկոպոսաց այսմ նահանգի և աթո-
 ռոյ: ապա և մեք ձեռնադրեցաք: 210. ի ձեռս սոցա. զոր և հնա-
 զանդեալքն: 210—1. օրհնին: 211. յամենայն: 212. անհնազան-

ճնամիրն այսմ՝ սրբոյ աթոռոյս դատապարտեցին յԱս-
 առուծոյ և յամենայն սրբոց նորա և անիծեալք լիցին
 213 «ի կեանս և ի մահ. և չունի որ իշխանութիւն այլ և
 «այլ ասերոյ այս սրբոյ Լուսաւորչի աթոռոյս, ոչ ի մե-
 «րոց և յօտարաց: Իսկ եթէ ընդդիմանան բանիւք կամ
 «թղթով կամ այլով իւրք, անիծեալ լիցին կրկին ան-
 «գամ յԱսառուծոյ և յամենայն սրբոց նորա. իսկ ըն-
 220 «դունողքն սորա օրհնեալ լիցին յԱսառուծոյ և յամե-
 «նայն սրբոց նորա և ի մէնջ»:

Գարձեալ ըստ պատմութեանց գրոց, յորժամ ի
 Հռոմկլայ և ի Սիս էին կաթուղիկոսութիւնք Հայոց
 կամակցութեամբ մերոց թագաւորաց, յայնժամ էին
 225 յարեելս Միսիթար մականուամբ Գոշ կոչեցեալն, որ դա-
 րեւելեան Զաքարէ իշխանին խնդիրքն յղեաց ի Սիս
 առ առաջին օժեալն Լեօն, և առ կաթուղիկոսն Հայոց
 Յովհաննէս, զոր նոցա ժողով արարեալ կատարեցին
 զխնդիրսն 9):

230 Եւ աշակերտ նորին Վանական և նորայն մեծ Վար-
 դան, որ եկն յերկրպագութիւն սուրբ Աջոյն և ի տե-
 սութիւն առաջին Հեթմոյ թագաւորին, զոր ժողով
 արարեալ նոցա կաթուղիկոսան Կոստանդեալ ի ՈՂԵ
 թուին մերոյ ի մայրաքաղաքս Սիս ի սուրբն Սոփիայ
 235 և գրեցին կանոնս, որ է գլուխ ԻԵ. և ետուն ի մեծ
 վարդապետն Վարդան, զոր տարեալ յարեելս և յղեալ
 հաւանութեան ձեռագիր: Զայսօսիկ Կիրակոս պատմա-
 գիրն գրէ. և աշակերտն Վարդանայ Ներսէս և նորայն

գողքն: 213. այս 214. անիծեալ եղիցին: 215. ի կեանք: 216. աթո-
 ուոյս Լուսաւորչի 217. և ոչ յօտարաց:

Թ.դ. 39^թ: 218. իւրք իբօք, անիծեալ եղիցին: 220. օրհնին:
 221. չիք ի մէնջ: ամէն: 222. Եւ գարձեալ: 224. յայնժամ գոյր: 225.
 անուանի վարդապետ Միսիթար: 226. զխնդիրսն: 227. Լէօն: չիք Հա-
 յոց: 228. Յօհաննէս: 229. զխնդիրսն: 230. և նորին մեծն: 231. զոր
 եկեալ սրբոյ: 232. ժողովք: 233. Կոստանդնիւ կաթուղիկոսիւ: 234.
 թուին մերում: 235. գլուխս 25: 237. զհաւանութեան ձեռագիր

Եսայի, և նորայն Յօհան Որոտնեցին և նորայն Գրիգոր
 240 Տաթևացին, որ յղեաց ԸՃԾՁ թուին Հայոց զԱղթա-
 մարցիք ի Սիսա առ կաթուղիկոսն Յակովբ և եղեն հնա-
 զանգ սուրբ Լուսաւորչի աթոռոյն, որ եղեն մի հօտ
 և մի հովիւ. զայս Գրիգոր Տաթևացւոյ Վարուց գիրքն
 գրէ, և նորին աշակերտք Պօղոս և Մատթէոս, որ եկեալ են
 245 սոքա ի Սիսա, և նստաւ կաթուղիկոս Պօղոս, որ կայ
 այժմ գերեզմանն ի վանքս մեր, զոր ինքն շինեաց ԸՃԿԲ
 թուին Հայոց, զի կայ գրուած ի փորուած քարի,
 ի վերայ գրան վանիցս, և ի յիշատակարան Ճաշոցին,
 զոր ինքն ետ գրել, և ի սորա ժամանակն Էջմիածին
 250 կաթուղիկոս չիկայր, և ի Սիսա կայր կաթուղիկոս:

Արդ սոքա ընդէր կամակից և հնազանգ էին կա-
 թուղիկոսացն, որ ի Սիսա, որ և ինքն Պօղոս կաթուղի-
 կոս եղև: Միթէ կաթուղիկոսին ժողովոյն վարդապետքն
 քան զնոսա վեհագոյնք էին և իմաստճւնք, գիտեմ որ
 255 չէք կարող ասելոյ: Եւ թէ այլ գրոց և կամ այս սրբո-
 ցոց վկայիցն չպատկառեցար, գոնեա պատկառեան ի ձե-
 րոց հարցդ, այսինքն ի Գրիգոր վարդապետէ Կեսարա-
 ցւոյ, որ նորին իշխանութեամբն պարծիք. այլ լսելով
 զրախօս չարախօսացն, որք ապականեն զսելիս որպէս
 260 Յուդայն՝ որ առեալ էր զպատիւն և զաստիճան և զիշ-
 խանութիւն, բայց յետոյ ուրացեալ մատնեաց զՏէրն

ի մերոց: Զայս 239. նորին Յօհան և նորին Գրիգոր: 240. զոր
 յղեաց ի ՊԾՁ:

Թ.դ. 40^մ: 243-4. որ այս ի Գրիգորի Տաթևացւոյն վարան գրի:
 244—5. զոր եկեալ ի Սիսա նստան կաթուղիկոսք, Պօղոս 246. գե-
 րեզմանն ի յաթոսս մեր: ի ՊԿԲ: 247. չիք Հայոց: զոր կայ գրեալ
 ի փորուածս: 248. գրան աթոռոյս: Զյիշատակարան: 249. Արդ՝ ի ժա-
 մանակի սոցա Էջմիածին: 250. ոչ գոյր և ի Սիսա գոյր: չիք կաթու-
 ղիկոս: 251. չիք Երդ: հնազանգք: 253. կաթուղիկոսական: վար-
 դապետք: 254. քան զնոսա վեհագոյնք և իմաստճւնք էին: 255 յայլ
 րոց: յայս սրբոց: 257. հարց: ի Գրիգորէ: 259. զրաբան որ: 260.
 զՅուդայն, որ էառ պատիւ, աստիճան և իշխանութիւն: 261. չիք

նախանձելով ընդ իւրն նարդոսեան (Յովհ. աւետ. ԺԲ. 3—7): և ըն:

Գործեալ անուանեալ կաթուղիկոս եւ գրեալ ըզ-
 265 մեզ. ոչ երկնչիս յԱստուծոյ և ի տէրունական հրամանէ՝
 զի «որ ասէ ցեղբայր իւր մորոս և յիմար պարտաւոր լիցի
 գեհնոյն (Մատթ. Ե. 22), որպէս և հրէայքն զԲրիտոս
 Սամարացի ասէին (Յովհ. աւ. Ը. 48), ուրեմն պա-
 տուէր ունիցիս ի նոցանէ որպէս պատուիրեցին առաքե-
 270 լոցն, մի յիշել զանունն զայն (Գործք Առաք. Գ. 40):
 նոյնպէս և Ռափսակ հրատարակելով հպարտանայր
 ի վերայ բարեպաշտին Եզեկիայ թէ. «Ասացէք ցեղե-
 կիս» (Գ. Թագ. ԺԸ. 19) և ըն: Ո՛չ նոյն գիրքն, որ գրեղ
 ձեռնագրեաց՝ նոյն և զմեզ. ոչ նոյն կարգ է առաքելոցն՝
 275 որ քեզ նոյն և մեզ. լինի՝ թէ մերն աւելի է բանիւ մի, զի
 Գրիգոր վարդապետն աջովն իւր ետ ձեզ գաւազան,
 նոյն աջովն և ետ մեզ գաւազան հայրապետական, և
 աւելին այս է, որ իւր աջովն զսուրբ Լուսաւորչի Աջն
 եզ ի վերայ գլխոյ մերոյ, թողում՝ զՍեղբեստրոսին և ըն:
 280 Այսուհետև անուանեալն ո՞վ եղև, Փելիքս (Գործք
 Առաք. ԻԳ) և Փելիտէս (Տիմոթէոս. Բ. 14 — 19)
 10). և ոչ թէ պարծելով է այս վերոգրեալքս, քաւ
 և մի լիցի: Բայց թէ պարծենամք ունիմք և տեղիք,
 վասն զի սուրբ Լուսաւորչի Աջն ի մեզ, սուրբ Երուսա-
 285 ղէմն՝ թէմ: Եւ ևս երկու ազնուական և գերագրական

ուրացեալ գՏէրն իւր: 262 իւրոյն:

Թղ. 40^բ: 264. Եւ գործեալ: 265 մէնջ. չերկնչիս: հրամանէն:
 266. չիք զի: կամ յիմար: 267. (ասէ) գեհնան հրոյն: չիք ևս 268.
 Սամարացի կոչէին: 269. պատուիրեցես ըստ նոցա: նորա առաքե-
 լոցն: 271—2. Ռափսակ հպարտանալով ի վերայ բարեպաշտին Եզեկիայ
 մեծարանէր յասկն. ասացէք: 273. գիրք է: 275. որ ի քեզ նոյն և ի
 մեզ: բանիւ միով: 276. աջիւն իւրով ետ մեզ: 277. աջիւն ետ մեզ ևս
 278. իւր աջիւն զսրբոյ: 279 գլխոյ իմոյ: և զՍեղբեստրոսին և զՆի-
 կողայոսին, և զԲարսուամայն: 280. Արգ՝ այսուհետև ո՞րն եղև, ո՞ Փե-
 լիքս և Փելիգէս: 282. ոչ եթէ պարծիմք ինչ վերագրեցելովքս: 283.
 չիք և մի: պարծիմք ունիմք զտեղի պարծանաց: 284. Աջն, պար-
 ծանքն պարծանաց առ մեզ է և սուրբ:

իմաստութիւն կայ Հայոց ազգիս, նախ՝ գրչութեան
 արհեստն և երկրորդ՝ երաժշտութեան. ահա գրչու-
 թիւն յայտնի է ընդ ամենայն տեղիս. մանաւանդ որ
 բազում գրեանք առ ձեզ են, և երաժշտութիւն յայտնի
 290 է, զի ցրուեալ է ընդ ամենայն աշխարհս, որպէս Ազ-
 բահանու Խաչատուր վարդապետն (11), որ ի Վասիլ եպիս-
 կոպոսէն աւեր է զպաշտեցմունս և զկարգ քահանա-
 յութեան, որպէս ասեն. «Սաղմոսն ի Մշայ և Խաչն ի
 Սսայ», զինչ երկարեցից, որ ձեզ ամենեցուն յայտնի է:
 295 Դարձեալ գրեալ է քո Մովսէս վարդապետ և կա-
 թուղիկոսն մեծ վարդապետին Տէր Գրիգորի Կեսա-
 բացւոյն, զի. «Խնդրէ մայրս մեր սուրբ եկեղեցի զՎիա-
 բանութիւն և միոյ հարսին մի փեսայ, երկու և երեքն
 ընդդէմ կանոնաց է. և գրեալ էր, եթէ ոչ վասն իմոյ
 500 հաստատութեան ճառին, քանզի և կամաւ իմով կա-
 միմ հրաժարիլ յիմոյս բաժնէս, բայց զոր դուք կամիք,
 և ուր հաճիք, անդ հաստատեցէք» և ըն:

Բայց զերկրորդն դուք արարիք, որ ի սրբոյ Գրի-
 գորէ մինչև ցՅովսէփ կաթուղիկոսն (2-րդ 12) կաթուղի-
 505 կոս է. սոքա ամենեքեան մի հարսին մի փեսայ էին,
 երկրորդոյն պատճառն դուք եղաք. ո՞վ եղև ըստ կա-
 նոնաց, մեք թէ դուք, որպէս որ ի բազում տեղիս
 Գրիգոր վարդապետն ապստամբ կոչէր զձեզ, որպէս

ԹՊ. 41^ա: և ևս՝ որ ազնուական: 286. կայ այդ ի պարժանս Հա-
 յոց. 287. երկրորդն՝ երաժշտականութիւն: 288 չիք որ: 289. գրեանք
 որ առ: 290. զի ընդ ամենայն աշխարհ ցրուեալ է: 290—1. յԱսպահան:
 292. էառ զպաշտամունս և ևս զկարգ: 293 չիք և: 294. երկարեմք,
 որ ձեզ և: 295. Եւ դարձեալ: վարդապետն քո Մովսէս կաթուղի-
 կոսն: 296. չիք Տէր: 297. թէ խնդրէ մեր մայր: 298. բ. կամ դ.:
 299—300. թէ ոչ թէ վասն հաստատութեան իմոյ ձառեմ չիք կամիմ:
 301. հրաժարեալ յիմում բաժնէս: 303. Այո, ճշմարիտ է ասացեալը.
 միոյ հարսին մի փեսայ և աւելին ընդդէմ կանոնաց է, ստոյգն և
 ճշմարիտն այս է. բայց զերկրորդն: զի ի սրբոյն:

ԹՊ. 41^բ: 304. Զ. երրորդ: 305. միոյ հարսին: 306. այլ երկ-

4. Կաթուղիկոսական բնակավայրերի ցանկը, և այդ տեղերում յարատևութեան թուերը ճիշդ չեն: Մի առ մի ճշդել աւելորդ ենք համարում: Արամուս ամենեին կաթուղիկոսարան չէ եղել. միայն Գուլիթ Ա. որ 729 թ. կաթուղիկոս ընտրուեց, իւր հայրենի Արա՛ծոն գիւղում եկեղեցի շինեց և այդ եկեղեցու մօտ ութ տարի սպրեց: Գուլինը 452—924 հանդիսանալով հայրապետական աթոռ՝ այնտեղ գահակալեցին 40 կաթուղիկոս, երկու տեղակալ և մի հակաթոռ՝ 600—617 թ. Յունաց բաժնի Աւան դիւղաքաղաքում:

5. Ընդունուած է կարծել, որ Հայրապետական աթոռը Վաղարշապատ տեղափոխուեց 1441 թ. սակայն Կիրակոսի յաջորդ Գրիգոր Մակուեցու մի կոնդակը, որի գլխաւոր կէտերը տպուեցին «Արարատ»-ի 1904 թ. յունվար ամսում (եր. 37, 38) այդ թիւը տարակուսելի է դարձնում: Կոնդակը գրուած է 1441 թուին, Մակուեցու կաթուղիկոսութեան 11-րդ ամսում. իսկ ինքն կաթուղիկոս է օծուել եւ յունվարի է. ին. ուրեմն կոնդակը գրուած է 1441 թ. դեկտեմբեր ամսին: Կիրակոսը երկամեայ կաթուղիկոսութիւնից յետոյ հրաժարուեց, ուրեմն նրա ընտրութիւնը եղել է ոչ թէ 1441 այլ 1438 թ.:

Սաի Սիմէօնի առաջ բերած թուերը ոչ իրար են համապատասխանում և ոչ էլ պատմական զէպքերին, որով և կորցնում են իրանց կարեւորութիւնը. մեզ համար կարեւորութիւն ունի այն, որ Մակուեցու կոնդակի համեմատ հայրապետական աթոռի տեղափոխութեան թիւը պէտք է զննել 1441-ի փոխանակ 1438: Սիմէօն Կիրակոսի կաթուղիկոսութիւնը անուշնում է զապալով, որ կը նշանակի հաստատագրով. նա դրանով կամենում է ասել, թէ Կիրակոսը ոչ թէ եկեղեցական օրէնքով և ազգային ընտրութեամբ է կաթուղիկոսացել, այլ տիրոջ իշխանութեան հրամանով:

6. Գրիգոր Կեսարացին Սրապիոնի, որ յետոյ էջմիածնի կաթուղիկոս դարձաւ Գրիգոր ԺԳ. անուամբ, աշակերտներէց էր: Մովսէս կաթուղիկոսը յարգանքով էր վարւում Գրիգոր Կեսարացու հետ, որովհետեւ նա, թէև Սրապիոնի կրտսեր աշակերտներէց, սակայն առ ռոս Գրիգորի էր շարունակել իւր ուսումն, ու նրանից վարդապետական գաւազան ստացել: Փիլիպոսն էլ յարգում էր Գրիգորին, որովհետեւ ինքն էլ Մովսէսի աշակերտն էր: Մնացած հոգևորականները պատկառում էին նրանից, համարելով նրան երախտաւոր էջմիածնի երկու ամենանշանաւոր կաթուղիկոսների: Անշուշտ, Գրիգոր Կեսարացին անձնական արժանաւորութիւն էլ ունէր, իբրև հմուտ և եկեղեցական կարգ կանոններին նախանձախնդիր հոգևորական:

7. Սաի Ազարիա կաթուղիկոսի մահից յետոյ (1601 թ.) նրա աշակերտ Յովհաննէս Անթափեցին Ստում օծուեց կաթուղիկոս, իսկ ոմն Պետրոս Կարկաւեցի՝ Բերիայում (Հալէպ). Գրիգոր Կեսարացին, Նրուսա-

ղէմ գնալիս՝ այս երկպառակութեան և խռովութեան վերջ տալու համար մտաւ Արլիկիա, որոշեց՝ որ երկուքն էլ իրանց անդերում մինչև իրանց մահը վարեն կաթուղիկոսութիւնը, իսկ մէկի կամ միւսի մահից յետոյ կենդանի մնացողը, Սսում հատատելով իւր աթոռը՝ միայնակ վարի իշխանութիւնը: Այսպէս ևս եղաւ. Պետրոսի մահից յետոյ Յովհաննէսը միայն վարեց իշխանութիւնը Սսում:

8. Գրիգոր Աեսարացին կարծում է, որ Քաղկեդօնի ժողովից յետոյ հայ հայրապետները դադարեցին Աեսարիայում ս. օծումն ընդունելը և ինքնադուխու անկախ դարձան: Քաղկեդօնի ժողովը գումարուեց 451 թուին. մինչդեռ Արշակ Բ. թագաւորը և Ներսէս Մեծը 366 թ. Վաղարշապատի Բ. ժողովում, Քաղկեդօնի ժողովից 85 տարի առաջ արդէն որոշել էին հայ եկեղեցու անկախութեան և հայրապետի՝ իւր եպիսկոպոսներից օծումն ընդունելու խնդիրը:

9. Զաքարէ և Իվանէ եղբայրները Վրաց արքունիքում մեծ նշանակութիւն ունէին: Հայ և Վրացի զինուորների միջից տօների առիթով տարածայնութիւններին վերջ տալու համար խնդրեցին Յովհաննէս Է. Մեծարարոյ կոչուած կաթուղիկոսից ս. Աստուածածնի Վերափոխման և Խաչվերացի տօները Վրաց հետ տօնել, և վրանի տակ, շարժական սեղանի վերայ ս. պատարագ մատուցանել: Այդ ժամանակ Յովհաննէս Մեծարարոն Հռոմկլայ էր արքայութեան և Լևոն Բ. թագաւորի հրամանով Կաւթ Գ. օծուելով Սսում՝ վարում էր կաթուղիկոսական իշխանութիւնը, ուստի և Կաւթի նախագահութեամբ գումարուեց Սսի Ա. ժողովը 1204 թուին: Ժողովը Զաքարէի խնդրին բաւարարութիւն տուեց և որոշումն յատուկ պատգամաւորի ձեռքով ուղարկեց Զաքարէին: Սակայն Զաքարէի հրամանով Լօռու ժողովը 1205 թ. և Սնույ Կ. ժողովը 1207 թ. շրնգունեցին Սսի ժողովի որոշումները: Մխիթար Գօշը իւր երկդիմի վարմունքով և Խաչատուր Տարօնեցին, «Խորհուրդ խորին» շարականի հեղինակը, լռելեայն քաջալիրում էին Զաքարէին:

10. Փեղիքսը Հռովմայեցւոց կողմից դատաւոր էր Պաղեստինի Աեսարիայում: Հրէաները Փեղիքսին գանձատեցին՝ թէ Պօղոսը ապականիչ խռովարար է և Նազովրեցւոց տղանդի—քրիստոնէութեան—առաջնորդ: Պօղոս երուսաղէմից Փեղիքսի մօտ տարուեց, որ համոզուելով և հաւատալով հանդերձ Պօղոսի անմեղութեանը, բանտարկեց նրան, որ ընծայ ստանայ և սարս արձակի: Պօղոսը երկու տարի մնաց բանտում, և երբ Փեղիքսը Հռովմ կոչուեց, Հրէաներին հաճելի մնալու համար դարձեալ շարձակեց Պօղոսին (Գործք առաք. զԻԲ, ԻԿ): Փեղեսոսը մերժուած էր եկեղեցւոց իւր հերետիկոսական կարծիքի համար: Նա ասում էր, որ մեռելների յարութիւնը արդէն եղած է (Տիմօթ. Բ. 14—19), Սսի Սիմէօնը Փիլիպպոս կաթուղի-

կոսին Փելլիքս և Փեղեաէս է կոչում բայի անունների նմաձայնութիւնից, և այն պատճառով, որ, որպէս թէ Փիլիպպոսը համոզուած է իւր անմեղութեանը բայց Փելլիքսի պէս անձնական շահը ի նրկատի ունենալով չի խոստովանում, և Փեղեատոսի պէս հետեւելով ճշմարտութիւնից՝ կործանում է ոմանց հաւատը դէպի Սսի աթոռը:

11. Խաչատուրը ծննդեամբ Աեսարացի էր, բայց Ասպահանցի էր կոչում, որովհետեւ երկար ժամանակ այնտեղ առաջնորդութիւն է արել: Խաչատուր վարդապետն ևս իւր ժամանակի նշանաւոր հոգեորականներից էր: Մովսէս Գ. կաթողիկոսից ուղարկուեց Ահաստան այնտեղի հայերի գործերին վերահասութիւն գործելու. բայց ապարդիւն: Խաչատուրը, ինչպէս երևում է Սիմէօնի թղթից, ձեռնադրուած է Սսի եպիսկոպոսից: Խաչատուրի աշակերտն էր Փիլիպպոսի յաջորդ Յակովբ Գ. Ջուղայեցին:

12. Մեր օրինակում Յովսէփը կոչուած է Ղ. (90-րդ.) կաթողիկոս. Վիեննայի օրինակում՝ Զ. (6-րդ.), անշուշտ դ-ի և գ-ի նմանութեան պատճառով: Յովսէփը, եթէ ընդունենք Վայոց Ձորեցին անգամ, դարձեալ 6-րդ կաթողիկոսը չէ. իսկ այստեղ՝ Սիմէօնը ի նկատի ունի Յովսէփ Գ. Սսեցին, որը 1439 թուին կաթողիկոսացաւ և մի քանի ամսից յետոյ վախճանուեց. որից յետոյ գահ բարձրացաւ Գրիգոր Թ. Մուսարէկեանը և Հայրապետական աթոռը տեղափոխուեց Վաղարշապատ:

Յ. Ե.

